

## Կանանց նկատմամբ բռնությունների, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի եւս արշավի նախագիծ

Պատրաստված է Կանանց նկատմամբ բռնությունների, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի աշխատանքային խմբի կողմից: (EGTFV) և ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 2006թ. հունիսի 21-ին:

### Արշավի ընդհանուր նկարագիրը

#### I. Ներածություն

Կանանց նկատմամբ բռնությունը կանաց և տղամարդկանց միջև իշխանության անհավասարակշռության արդյունքն է, որը տանում է կանանց նկատմամբ լուրջ խտրականության թե՛ հասարակության մեջ և թե՛ ընտանիքում: Ներընտանեկան բռնություն տեղի է ունենում եւս յուրաքանչյուր պետությունում, չնայած օրենքում, քաղաքականության մեջ և գործնականում տեղի ունեցող դրական զարգացումներին: Կանանց դեմ բռնությունը մարդու իրավունքների ոտնահարում է, որն ըստ էության կանանց զրկում է հիմնարար ազատություններից օգտվելու հնարավորությունից: Այն հաճախ կանանց խոցելի է դարձնում հետագա բռնարարքների նկատմամբ և մեծ խոչընդոտ է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց անհրավահավասարությունը հաղթահարելու ճանապարհին: Կանանց նկատմամբ բռնությունը վնասում է Եվրոպայում խաղաղությանը, անվտանգությանը և ժողովրդավարությանը: Պետությունները պատասխանատվություն են կրում իրենց բոլոր քաղաքացիների մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու համար:

Ուստի պետությունները պետք է երաշխավորեն, որ իրենք ձեռնարկել են բոլոր ողջամիտ միջոցները կանանց նկատմամբ բռնության բոլոր դրսևորումների, այդ թվում նաև ներընտանեկան բռնության կանխարգելման, հետաքննման և պատժի ուղղությամբ: Կանանց նկատմամբ բռնությունը բարդ խնդիր է, հատկապես երբ այն տեղի է ունենում տանը, ինչը կարող է էլ ավելի բարդանալ իշխանությունների հակազդման արդյունքում, ուն կանայք դիմում են օգնություն ստանալու համար: Մինչ կանանց նկատմամբ բռնությունների շուրջ կառավարությունների առանձնահատուկ մոտեցումները կտարբերվեն կախված առանձին երկրներին հատուկ իրավիճակներից, դրանք բոլորն էլ համապարփակ հակազդման կարիք ունեն: Այն պետք է անդրադառնա բռնության արմատական պատճառներին և հետևանքներին, և հայտ ներկայացնի մոտեցումներին և վարքին և ընդլայնվի՝ ընդգրկելու իրավական, քաղաքական և գործնական միջոցառումներ:

Վերջերս եւս Փաստահավաք ուսումնասիրությունը<sup>1</sup> ցույց տվեց, որ ոչ բոլոր անդամ պետություններն են համապատասխան միջոցներ տրամադրում բռնության զոհերին, ազգային տվյալներ հավաքում ներընտանեկան

<sup>1</sup> 1 Stocktaking Study on the measures and actions taken in the Council of Europe member states to combat violence against women, 2006. EG-TFV (2006) 8 rev 3 2

բռնությունների դեպքերի վերաբերյալ, որոնք ներկայացվում են ոստիկանության կամ առողջապահության ոլորտների ուշադրությանը և չեն հետևում դրանց ընթացքին կամ դատական արդյունքներին համակարգված գործընթացի միջոցով: Հետևաբար գոյություն չունի որևէ մակարդակ, որի համեմատ կարելի լինի չափել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի իրավական կամ այլ միջոցառումների արդյունավետությունը:

Այս նպատակով, ԵԽ անդամ պետություններին կոչ է արվում գերակայություն դարձնել կանանց նկատմամբ այդ թվում նաև ներընտանեկան բռնությունների կանխարգելումն ու դրանց դեմ պայքարը և խրախուսվում է ակտիվորեն ներգրավվել ԵԽ արշավի իրականացմանը, որը ներպետական մակարդակում հաստատուն հանձնառության կոչ է անում:

## **II. Սահմանում**

Համաձայն կանանց բռնություններից պաշտպանելու վերաբերյալ անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի ԹԻՎ (2002)5 *հանձնարարականի*, «կանանց դեմ բռնություն» տերմինը պետք է հասկանալ որպես գենդերային ցանկացած հիմքով բռնություն, որը կանանց հասցնում է կամ կարող է հասցնել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք, ներառյալ այդպիսի գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ կամավոր հրաժարումն ազատությունից, անկախ այն բանից, թե որտեղ են դրանք ի հայտ գալիս՝ հանրային թե անձնական կյանքում: Սա ներառում է ընտանիքում կամ ընտանեկան միավորում կատարված բռնությունը, այդ թվում, *inter alia*, ֆիզիկական և հոգեկան բռնությունը, զգացմունքային և հոգեբանական շահագործումը, բռնաբարությունն ու սեռական շահագործումը, արյունապղծությունը (ինցեստ), ամուսինների, մշտական կամ պատահական զուգընկերների կամ համատեղ ապրողների միջև բռնաբարության դեպքերը, հանուն պատվի կատարված հանցագործությունները, կանանց սեռական անդամախեղումը, և կանանց վնասող այլ ավանդական պրակտիկան, ինչպես օրինակ՝ բռնի ամուսնությունները:

Այս սահմանումը կիրառվում է Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում ներընտանեկան բռնության դեմ պայքարի ԵԽ արշավի շրջանակներում:

## **III. Հիմնական թեմաները**

Նկատի ունենալով ԵԽ Երրորդ գագաթաժողովին ընդունած Գործողությունների ծրագիրը և Նախարարների կոմիտեի Rec(2002)5 հանձնարարականը՝ քարոզարշավի հիմնական թեմա է սահմանվել ընտանիքում կամ ընտանեկան միավորում կանանց դեմ ուղղված բռնության (ներընտանեկան բռնության) կանխարգելումը և դրա դեմ պայքարը:

## **IV. Արշավի նպատակները**

Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում ներընտանեկան բռնության դեմ պայքարի ԵԽ արշավի նպատակներն են.

- 1) ԵՍ անդամ երկրներում բարձրացնել իրազեկությունն այն մասին, որ կանանց դեմ բռնությունը մարդու իրավունքների խախտում է, և յուրաքանչյուր քաղաքացու՝ դրան մարտահրավեր նետելու կոչ անել,
- 2) կոչ անել պետություններին քաղաքական կամք ցուցաբերել՝ տրամադրելով համապատասխան ռեսուրսներ կանանց դեմ բռնության դեմ պայքարում կոնկրետ արդյունքներ ստանալու համար,
- 3) Օրենսդրության և ազգային գործողությունների ծրագրի միջոցով խթանել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետ միջոցների իրականացում՝ Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականը կատարելու համար և պարբերաբար դիտարկել արձանագրված առաջընթացը:

## V. Նպատակները

Տանը կամ ընտանիքում տեղի ունեցող բռնությունից կանանց պաշտպանությունը պետք է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դիտարկվի քաղաքական ամենաբարձր մակարդակում, և համապատասխանաբար պետք է հատկացվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Բոլոր անդամ պետությունները պետք է պարտավորվեն կանխարգելել բռնության այս տեսակը, պաշտպանել դրա զոհերին և տրամադրել համապատասխան ծառայություններ, իրավական օգնություն և փոխհատուցում, ինչպես նաև պետք է պատասխանատվության ենթարկեն օրինախախտներին: Ի լրումն, անդամ պետությունները պետք է բարձրացնեն խնդրի վերաբերյալ իրազեկությունը բոլոր հնարավոր միջոցներով, մասնավորապես լրատվամիջոցների և կրթական ծրագրերի միջոցով: Հայրիշխանական մշակույթը կարևոր ուժ է կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը լեգիտիմացնելու գործում: Հետևաբար անհրաժեշտ է, որ անդամ պետությունները միջոցներ ձեռնարկեն կանանց դեմ բռնության պատճառ հանդիսացող խտրականության վրա հիմնված ավանդույթների և պրակտիկայի, ինչպես նաև զենդերային կարծրատիպերի դեմ: Ցածր եկամուտը, գործազրկությունն ու աղքատությունը ընտանիքում և տանը կանանց դեմ բռնության հիմնական ռիսկային գործոններն են: Հետևաբար, պետությունները պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն կանանց տնտեսական անկախությունը խթանելու համար: Անդամ պետությունները պետք է պարտավորվեն մշակել և կյանքի կոչել կոնկրետ և արդյունավետ միջոցներ օրենսդրության և գործողությունների ազգային ծրագրերի միջոցով կանանց դեմ բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար՝ ինչպես նախանշված է Թիվ (2002)5 հանձնարարականում, և այս արշավի վերջում պետք է զեկուցեն արձանագրված առաջընթացի վերաբերյալ: Սույն հանձնարարականում հիշատակված բոլոր միջոցները հավասարապես կարևոր են և պետք է կյանքի կոչվեն: Փաստելով անդամ պետությունների այս հանձնարարականի իրականացման տարբեր մակարդակները, անդամ պետություններին կոչ է արվում Քարոզարշավի ընթացքում էական առաջընթաց արձանագրել հետևալ ոլորտներում.

ա. Իրավական և քաղաքականության մշակման միջոցառումներ

- անհրաժեշտության դեպքում վերանայել և լրանշակել ազգային օրենսդրությունը, որպեսզի սահմանվեն և լրացվեն տանը և ընտանիքում կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակներին վերաբերող բացթողումները,

չեղյալ հայտարարել այն օրենքները, որոնք ենթադրում են կանանց նկատմամբ խտրականություն, և քրեականացնել կանանց նկատմամբ բռնության ցանկացած գործողության տեսակ, ներառյալ ամուսինների միջև բռնաբարությունը,

- հիմնել արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմ, ներառյալ պաշտպանության կարգը բռնության զոհ հանդիսացող բոլոր կանանց համար և պարբերաբար դիտարկել ու գնահատել դրա արդյունավետ կիրառումը,

- երաշխավորել, որ ներգաղթի օրենսդրությունը և վարչական ընթացակարգերը չեն խոչընդոտում կանանց ձերբազատվել բռնություն ենթադրող կապերից՝ արտաքսման, իրավական կարգավիճակը կամ երեխաների խնամակալության իրավունքը կորցնելու վախի պատճառով,

- սահմանել և իրականացնել գործողություններ ընտանիքում կամ տանը կանանց դեմ բռնության դեպքերի վերաբերյալ պատկան մարմիններին տեղյակ պահելու, նմանօրինակ գործողությունների հետապնդման և պատժի սահմանման հաճախականությունը բարձրացնելու նպատակով,

- զոհերին տալ իրավական օգնություն, սոցիալական-հոգեբանական օժանդակություն և երաշխավորել վկաների պաշտպանությունը,

- կանանց դեմ բռնությունը կանխարգելելու նպատակով մշակել ռիսկերի գնահատում և ապահովագրության պլանավորում, որպես հանցանքների կանխարգելման ստանդարտ ընթացակարգ, և երաշխավորել, որ հատուկ ուշադրություն է դարձվում բարձր ռիսկային խմբում գտնվող զոհերին, ովքեր ենթակա են բռնության կրկնման դեպքերի,

բ. Զոհերի պաշտպանություն և օժանդակություն

- տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ անվճար 24-ժամյա օգնություն ապահովող հաստատությունների ստեղծման համար, որոնք համալրված կլինեն համապատասխան կրթությամբ անձնակազմով, ինչպես նաև տրամադրել այլ ծառայություններ բռնության զոհ դարձած բոլոր կանանց

- բռնության բոլոր զոհերին տրամադրել համապատասխան օժանդակություն և որակի չափանիշներին համապատասխանող փաստաբանական ծառայություն, ուժեղացնել կանանց դիրքերը հասարակությունում և ապահովել, որ ծառայությունները մատչելի լինեն բոլորի՝ այդ թվում սոցիալապես բացառված, միգրանտ, փախստական, էթնիկ փոքրամասնություններին պատկանող և հաշմանդամ կանանց համար

- միջոցներ հատկացնել բռնության զոհ դարձած կանանց համար բավարար թվով ապահով կացարաններ(one place in a women's shelter per 7.500 inhabitants) տրամադրելուն, որոնք ստիպված էին լքել իրենց բնակարանները բռնության պատճառով, ինչպես նաև ստեղծել փաստաբանական և ճգնաժամային կենտրոններ բոլոր մարզերում և մատուցել այս ծառայությունները անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով,

- ձևավորել համակարգված, հագեցված և բազմակողմանի մասնագիտացված սեկտոր՝ կանաց դերը առողջապահության, արդարադատության, սոցիալական

ուղորտի և կրթության հիմնական ներպետական և տեղական հաստատություններում բարձրացնելու նպատակով՝ բռնության զոհ կանանց հրատապ, համապարփակ և համակարգված օժանդակության տրամադրման համար

- կազմակերպել կանաց դեմ բռնության վերաբերյալ համապարփակ վերապատրաստում այն մասնագետների համար, ովքեր զբղավում են ընտանիքում կամ տանը բռնության զոհ դարձած կանանց գործերով(օրինակ՝ ոստիկաններ, բժիշկներ, դատական ծառայողներ և այլն),

- կանանց դեմ բռնության խնդիրն ընդգրկել, որպես կանաց իրավունքների ոտնահարում և հասարակական առողջապահության հիմնախնդիր՝ դատական և անվտանգության ծառայողների, սոցիալական աշխատողների, ուսուցիչների և այլոց համար նախատեսված բոլոր կրթական վերապատրաստման ծրագրերում,

- բոլոր մակարդակներում քաջալերել հասարակական կազմակերպությունների աշխատանքը ուղղված կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին և համագործակցություն հաստատել այս հասարակական կազմակերպությունների հետ՝ ներառյալ համապատասխան ենթակառուցվածքային և ֆինանսական օժանդակությունը,

- բռնության զոհ դարձած կանանց տրամադրել ֆինանսական օժանդակություն, կացարան, բնակվելու անկախ իրավունք, ինչպես նաև վերապատրաստում և աշխատանք՝ նրանց հնարավորություն տալու ազատորեն որոշելու՝ ցանկանում է լքել իրենց զուգընկերոջը, թե ոչ,

- խրախուսել օրինազանցների ուղղված համապետական մակարդակով համակարգվող և տեղերում գործող ծրագրեր: Այս ծրագրերը պետք է ներառեն կանաց ապահովության խնդիրը և կազմակերպված լինեն զոհ դարձած կանանց համար նախատեսված ծառայությունների հետ համագործակցությամբ,

գ. Տվյալների հավաքում

- երաշխավորել վիճակագրական տվյալների համակարգված հավաքում՝ դասակարգված ըստ սեռի, բռնության տիպի, ինչպես նաև զոհի և հանցագործի միջև կապի տեսակի: Այս տվյալները պետք է հավաքվեն ազգային վիճակագրական գրասենյակների կամ այլ մարմինների կողմից (օրինակ՝ ընտանեկան բռնության ազգային դիտարկման ծառայություններ),

- մշակել և կիրառել այնպիսի մեթոդոլոգիա, որը թույլ կտա գենդերային վերլուծություններ և համեմատություններ անցկացնել Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետությունների հետ,

- հավաքել և տարածել լավ գործելակեպի օրինակներ՝ տանը կամ ընտանիքում բռնության կրկնությունը կանխարգելելու համար՝ պաշտպանելով իր զոհերին և հետապնդելով հանցագործներին ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակներում:

դ. Իրազեկության բարձրացում

- հրապարակավ դատապարտել կանանց նկատմամբ ներընտանեկան բռնությունները՝ որպես կանանց իրավունքների ոտնահարում, և պարտավորվել գործողություններ ձեռնարկել քաղաքական բարձր մակարդակում,

- բարձրացնել կանանց նկատմամբ ներընտանեկան բռնությունների շուրջ իրազեկությունը՝ օգտագործելով բոլոր մատչելի միջոցները, մասնավորապես՝ լրատվամիջոցների և կրթական ծրագրերի միջոցով՝ վիճարկելու գերակշռող գենդերային կարծրատիպերը և այս երևույթի ընդունելիության խտրական մշակութային նորմերը և հանրային կարծիքը:

- խրախուսել պետական և համայնքային առաջնորդներին և կարծիք ձևավորողներին՝ հրապարակավ ընդունել կանանց նկատմամբ ներընտանեկան բռնության լրջությունը, դատապարտել դրա (հանցավոր) իրագործումը, ինչպես նաև սովորույթով, ավանդույթով կամ կրոնով այն արդարացնելը:

- պետական լեզվով թարգմանել և բաժանել ԹԻՎ (2002)5 հանձնարարականը և դրան կից բացատրական հուշագիրը, եթե դեռևս դա չի արվել,

- օգանդակել իրազեկության բարձրացման առանձնահատուկ նախաձեռնություններին, որոնք միտված են տղամարդկանց՝ նրանց մոբիլիզացնելու կանանց նկատմամբ բոլոր, ներառյալ ներընտանեկան բռնությունների դեմ պայքարում ակտիվ մասնակցություն ունենալու համար:

## **VI. Ուղերձներ**

### **Ներընտանեկան բռնության դեմ պայքարի կոչեր հանուն միացյալ պետական գործողության**

Կանանց դեմ ներընտանեկան բռնությունը շարունակում է կարևոր խնդիր լինել, որը վերաբերում է եւս բոլոր պետություններին, անկախ մշակույթից, կրոնից, խաղաղ, պատերազմական (հակամարտային) կամ աղետային իրավիճակում գտնվելուց: Այն դրսևորվում է տարբեր ձևերով և շատ հաճախ է հանդուրժվում: Հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի կառավարությունները, խորհրդարանները և ռեգիոնալ իշխանություններն ու միջազգային կառավարական կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը արագ արձագանքեն՝ կանանց նկատմամբ ներընտանեկան բռնություններին վերջ դնելու նպատակով:

### **Ներընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ոտնահարում է**

Կանանց նկատմամբ ներընտանեկան բռնությունները չպետք է անձնական խնդիր համարվեն:

Կանանց նկատմամբ բռնությունը թե՛ ոտնահարում է և թե՛ սահմանափակում ու չեզոքացնում է մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Հետևաբար պետությունները արժանի ջանասիրությամբ գործելու պատասխանատվություն են կրում՝ այս տեսակի բռնությունները կանխարգելելու, զոհերին պաշտպանելու, նրանց փոխհատուցելու և հանցագործներին հետապնդելու ու պատժելու առումով:

Հետևաբար, պետությունները պարտավոր են նախաձեռնել բոլոր ողջամիտ միջոցառումները՝ երաշխավորելու, որ կանայք չենթարկվեն բռնության, և պաշտպանելու վտանգնվածներին ու փոխհատուցելու տուժածներին: Մշակույթը, սովորույթը, ընտանիքը կամ կրոնը չպետք է երբևէ օգտագործվեն որպես՝ տանը կանանց նկատմամբ մարդու իրավունքների խախտումների վրա աչք փակելու արդարացում:

**Ներընտանեկան բռնությունը լրջորեն վիրավորում է կանանց և վնաս հասցնում ամբողջ հասարակությանը՝ այդ թվում նաև գալիք սերունդներին:**

Բազմաթիվ կանայք շատ երկրներում մահանում են ներընտանեկան բռնության հետևանքով: Դեռ ավելին, փրկվող զոհերի ֆիզիկական և հոգեբանական առողջությունը լուրջ վտանգի է ենթարկվում: Բռնության այս տեսակը նաև լուրջ հետևանքներ է ունենում ընտանիքների, ինչպես նաև հասարակության վրա ընդհանուր առմամբ, քանի որ հաճախ շարունակվում է սերնդեսերունդ: Կանանց նկատմամբ բռնությունը, բացի անձնական և սոցիալական հետևանքներից, նաև տնտեսական մեծ գին ունի (բժշկական խնամք, հոգեբանական բուժում, անտարբերություն, աշխատանքային ցածր արդյունավետություն և այլն): Կանանց նկատմամբ ներընտանեկան բռնություններին վերջ դնելը յուրաքանչյուրի պարտականությունն է: Լռել նշանակում է հանցակից լինել:

**Ներընտանեկան բռնություն արշավը կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում տղամարդկանց ակտիվ ներգրավման կոչ է անում**

Արշավի ժամանակ անհրաժեշտ է խրախուսել տղամարդկանց ակտիվ մասնակցությունը կանանց դեմ բռնության պայքարում նախատեսված միջոցառումներին: Տղամարդիկ պատասխանատու են ոտքի կանգնել և մարտահրավեր նետել ներընտանեկան բռնություններին: Այս նպատակով նրանք կարևոր դեր ունեն խաղալու և կարող են լրացնել այլ տղամարդկանց միջև եղած բացը՝ նրանց նույնպես խրախուսելով արտահայտվել նմանօրինակ բռնության դեմ:

## **VII. Թիրախ խմբեր**

Եվրոպայի խորհուրդը կաշխատի տարբեր գործընկերների և թիրախ խմբերի հետ՝ *Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի արշավը* իրականացնելիս:

Դրանց թվում են՝

- Պետությունների ղեկավարներ
- Կառավարությունների ղեկավարներ
- Ազգային կառավարությունների նախարարներ
- Խորհրդարանների նախագահներ
- Խորհրդարանների անդամներ
- Տարածքային և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ
- Միջազգային միջկառավարական կազմակերպություններ
- Կանանց և մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային ոչ կառավարական կազմակերպություններ
- Ազգային կարծիք ձևավորողներ
- Տեղական համայնքի առաջնորդներ
- Տարածքային և ազգային գործարար առաջնորդներ
- Օրենքի հարկադիր կատարման
- Արդարադատության համակարգի ներկայացուցիչներ
- Սոցիալական և առողջապահական ոլորտի աշխատողներ և պետական սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ

- Կանանց օժանդակություն ցուցաբերող ոչ կառավարական ազգային կազմակերպություններ
- Կրթության ոլորտի մասնագետներ և խմբեր
- Արհեստակցական միություններ
- Բոլոր կանայք
- Կին զոհեր և փրկվածներ
- Տղամարդիկ՝ որպես փոփոխության միջնորդներ (ագենտներ)
- Երիտասարդական լսարաններ
- Երիտասարդ աշխատողներ

### **VIII. Կարգախոս**

Եւս արշավի կարգախոսն է. «Վերջ կանանց դեմ ներընտանեկան բռնությանը»:

### **IX. Տևողությունը**

Եվրոպայի խորհրդի արշավի նախապատրաստական աշխատանքները սկսվել են 2006թ. սկզբին: 2006թ. նոյեմբերին Մադրիդում տեղի ունեցավ մի բարձր մակարդակի համաժողով, որին մասնակցում էին կառավարության, խորհրդարանների, տեղական և տարածքային իշխանությունների, միջազգային միջկառավարական կազմակերպությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

(Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվան՝ նոյեմբերի 25-ին ընդառաջ և սկիզբ դնելով գենդերային բռնության դեմ ակտիվության 16 օրվան):

Արշավը կավարտվի 2008թ. մարտին (հավանաբար եզրափակիչ միջոցառումը կկազմակերպվի Կանանց միջազգային օրվան՝ մարտի 8-ին մոտ ժամանակահատվածում):

### **X. Պարտականությունների բաժանում**

Արշավը կիրականացվի ներգրավելով Նախարարների կոմիտեին՝ Մարդու իրավունքների գլխավոր տնօրինության (ԳՏԻ) իրավահավասարության բաժնի միջոցով՝ միջկառավարական հարթության, ԵԽԽՎ-ին՝ խորհրդարանական հարթության և ԵՏՏԻԿ-ին՝ տեղական և տարածքային հարթության վրա:

Բացի այդ, այս արշավը կիրականացվի անդամ պետությունների կառավարությունների և խորհրդարանների, միջազգային միջկառավարական կազմակերպությունների, ինչպես նաև կանանց բռնություններից պաշտպանող ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

### **Չավելված 1**

#### **Եւս արշավի շրջանակներում իրականացվելիք գործունեությունը**

Եւս արշավը կներառի իրականացման երկու մակարդակ: Առաջին մակարդակը կներառի գործողություններ, որոնք ուղղակիորեն կիրականացվեն Եւս կողմից՝ արտացոլելով նրա միջկառավարական, խորհրդարանական և տեղական ու տարածքային հարթությունները: Երկրորդ մակարդակը կազմված է ազգային արշավներից և ազգային գործունեություններից, որոնք ներպետական, տեղական և տարածքային մակարդակում կիրականացնեն Եւս անդամ պետությունները:

#### **I. Եւս գործողությունները**

ա) Մեկնարկող համաժով

2006թ. նոյեմբերին Մադրիդում կկազմակերպվի *Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի արշավը* մեկնարկող բարձր մակարդակի համաժողով՝ կառավարությունների, խորհրդարանների, տեղական և տարածքային իշխանությունների, միջազգային միջկառավարական կազմակերպությունների և ՈԿԿ-ների մասնակցությամբ: (Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվան, նոյեմբերի 25-ին ընդառաջ և սկիզբ դնելով գենդերային բռնության դեմ ակտիվության 16 օրերին)

*Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի աշխատանքային խումբը* լրջորեն առաջարկում է, որ ԵԽ արշավի մեկնարկող համաժողովը կազմակերպվի քաղաքական ամենաբարձր մակարդակում՝ այս ոլորտում աշխատող ՈԿԿ-ների ընդգրկումն մասնակցությամբ:

**բ) Լրատվամիջոցները և արշավը**

Արշավի մեկնարկին ԵԽ առաջնորդներին խրախուսվում է անց կացնել մամլո ասուլիսներ կամ հաղորդագրություններ և ներգրավվել քարոզարշավում՝ արշավը մեկնարկելու, ինչպես նաև կանանց նկատմամբ ներընտանեկան բռնություններն իրենց բոլոր դրսևորումներով դատապարտելու նպատակով: Հնարավորության դեպքում մամուլի ասուլիսներին կօժանդակեն հանրային քարոզարշավներ անդամ պետությունների, ԵԽ աշխատակազմի և ՈԿԿ-ների նախաձեռնությամբ:

**գ) Տարածաշրջանային սեմինարներ**

Բարձր մակարդակի հինգ սեմինարներ կկազմակերպվեն ԵԽ անդամ պետությունների նախաձեռնությամբ, որոնք կընդգծեն արշավի տարբեր նպատակները, կախված անդամ պետություններից կամավոր հիմունքներով տրամադրվող ֆինանսական միջոցներից: Անդամ պետություններին խրախուսվում է նախաձեռնություն հանդես բերել այս կապակցությամբ:

**դ) ԵՆԽՎ-ի և ԵՏՏԻԿ-ի կողմից կազմակերպվելիք միջոցառումներ:**

ԵԽ խորհրդարանական վեհաժողովը իրագործելու է արշավի խորհրդարանական հարթությունը: Նմանապես ԵՏՏԻԿ-ը կիրառելու է արշավի տարածքային և տեղական հարթությունը:

**ե) Արշավի հատուկ ինտերնետային կայքի ստեղծում**

*Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարին նվիրված* հատուկ ինտերնետային կայք կստեղծվի՝ արշավի և նրա շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Ինտերնետային էջը նաև տեղեկատվություն կտրամադրի ներպետական միջոցառումների և արշավների վերաբերյալ՝ կապ ստեղծելով ազգային արշավների ինտերնետային էջերի հետ: Բացի այդ, այն կծառայի որպես ինտերակտիվ ֆորում՝ տեղեկատվության և բարենպաստ գործելակերպի վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելու նպատակով:

**զ) Արշավի նյութերի բաժանումը անդամ պետություններին և ԵԽ տեղեկատվական գրասենյակներին և ներկայացուցչություններին**

• Արշավի նյութերը կբաժանվեն մասնակիցներին մեկնարկող համաժողովի և ռեգիոնալ սեմինարների ժամանակ, ինչպես նաև կտրամադրվեն ԵԽ Տեղեկատվական գրասենյակներին և ներկայացուցչություններին:

- Արշավի նյութերը կբաժանվեն ՈԿԿ-ներին և հանրությանը եւ քարտուղարության կողմից:

## **II. Անդամ պետությունների կազմակերպած միջոցառումները**

### **ա) Պատասխանատուների նշանակում**

Յուրաքանչյուր անդամ պետություն կնշանակի բարձրաստիճան որևէ պաշտոնյա և տեղեկատվության պատասխանատու եւս արշավի, ինչպես նաև ներպետական արշավների համար: Բարձրաստիճան պաշտոնյան կառաջնորդի *Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի արշավը՝* տեղեկատվության պատասխանատուի օգնությամբ: Տեղեկատվության պատասխանատուներին պետք է օժանդակեն Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային աշխատանքային խմբերը, որոնք պետք է ներառեն կանանց հարցերով զբաղվող ՈԿԿ-ներ և այլոց, ովքեր աշխատում են կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում: Ազգային աշխատանքային խմբի դերն է օժանդակել անդամ պետությունում Կանանց նկատմամբ, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի արշավի իրականացմանը:

Նպատակահարմար է, որ ազգային իշխանությունների կողմից տեղեկատվության պատասխանատու նշանակված անձը կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքարի ոլորտում ազգային մակարդակով պատասխանատվություններ կրող լինի: Տեղեկատվության ազգային պատասխանատուները կնպաստեն եւս արշավին՝ տեղեկատվություն տրամադրելով և մատչելի դարձնելով կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում ներպետական բերանպաստ գործելակերպը, ինչը կիրապարակվի եւս ինտերնետային կայքում: Եւս-ն կխրախուսի անդամ պետություններին, որոնք փորձ և փորձառություն ունեն օրենսդրական, քաղաքական և այլ միջոցների ոլորտում, իրենց գիտելիքները կիսել այլ անդամ պետությունների հետ՝ ազգային արշավներին օժանդակելու նպատակով:

Տեղեկատվության պատասխանատուներին խրախուսվում է հնարավորինս լայն մասշտաբներով բաժանել արշավի նյութերը բոլոր հետաքրքրված դերակատարներին ներպետական մակարդակում, մասնավորապես սոցիալական և առողջապահական ոլորտի աշխատողներին, ոստիկանությանն ու արդարադատությանը, քաղաքականություն մշակողներին և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում ներգրավված ՈԿԿ-ներին:

Յուրաքանչյուր անդամ պետություն եւս քարտուղարությանը կտեղեկացնի ազգային պատասխանատուի նշանակման վերաբերյալ: Համապատասխանաբար, 2006թ. սեպտեմբերին եւս ինտերնետային կայքում կիրապարակվի 46 ազգային պատասխանատուների վերաբերյալ տեղեկատվություն:

### **բ) Արշավի գործողությունների ծրագրերը**

Ազգային աշխատանքային խմբերին խրախուսվում է մշակել իրենց սեփական ազգային արշավի գործողությունների ծրագիրը հիմնված այս նախագծի վրա: Անհրաժեշտ է ներառել հետևյալ քայլերը՝

- Երկրի իրավիճակի վերլուծություն՝ որոշելու կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում հաջողություններն ու բացերը:

- Տվյալների հավաքում կամ գոյություն ունեցող տվյալների կազմակերպում՝ ազգային տեղեկատվական թերթիկ մշակելու նպատակով:
- Այս նախագծում մատնանշված նպատակներին համապատասխան կոնկրետ գործողությունների սահմանում՝ բացերը լրացնելու նպատակով:
- Համապատասխան միջոցներն նախատեսում, ժամանակացույցի սահմանում և այլն:
- Արշավի գործողությունների ծագրերի տրամադրում ԵԽ-ին տեղեկատվության փոխանակման նպատակով: Անդամ պետություններին առաջարկվում է ԵԽ քարտուղարությանը միջանկյալ հաշվետվություն ներկայացնել մեկ տարվա ընթացքում, այնուհետև ներկայացնել եզրափակիչ հաշվետվություն իրենց գործունեության և ազգային արշավների կոնկրետ արդյունքների վերաբերյալ աշխատանքային խմբին: Համաձայն իր մանդատի, աշխատանքային խումբը կգնահատի առաջընթացը ներպետական մակարդակում և կմշակի միջոցներ համաեվրոպական մակարդակում զարգացումների գնահատման և գործողությունների առաջարկներ մշակելու նպատակով:

**գ) Քարոզարշավների իրականացման առանցքային հնարավորությունները**

1) Մարտի 8

**Նշանակությունը՝** Կանանց միջազգային օր

Կանանց միջազգային օրն առանցքային հնարավորություն է հանրային նշանակության միջոցառումներ կազմակերպելու և լրատվամիջոցների շրջանում աշխատանքներ կատարելու համար՝ կանանց նկատմամբ, ներառյալ ներընտանեկան բռնությունների դեմ պայքարող կանանց կազմակերպությունների հետ համագործակցությամբ: ԵԽ Արշավում մասնակցող բոլոր անդամ պետություններին առաջարկվում է գերակայություն դարձնել բռնության այս տեսակը 2007 և 2008թթ. Կանանց միջազգային օրավա տոնակատարություններին և խթանել արշավի ուղերձները:

2) Մայիսի 15

**Նշանակությունը՝** Ընտանիքի միջազգային օր

2006թ. Ընտանիքի միջազգային օրը կարևոր հնարավորություն է ընձեռում՝ ընգծելու կանանց դեմ ներընտանեկան բռնությունների գոյությունը: Անդամ պետություններին առաջարկվում է քարոզարշավներ և լրատվական գործունեություն ծավալել և արտահայտվել նման բռնության դեմ:

3) Նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10

**Նշանակությունը՝** Կանանց դեմ բռնությունների վերացման միջազգային օր և ակիվության 16 օր:

Կանանց դեմ բռնությունների վերացման միջազգային օր և ակտիվության 16 օրերի արշավը հնարավորություն է ընձեռում լրատվական աշխատանքի և քարոզչության համար: ԵԽ արշավին մասնակցող անդամ պետություններին կոչ է արվում հրապարակավ արտահայտվել ներընտանեկան բռնությունների դեմ և ներպետական մակարդակում միանալ կանանց նկատմամբ բռնությանը վերջ դնելուն նվիրված Ակտիվության 16 օրերի արշավին մասնակցող կանանց ոչ կառավարական և այլ կազմակերպություններին:

Անդամ պետություններին նաև առաջարկվում է օգտագործել ազգային կարևոր ամսաթվերը արշավի խթանման նպատակով և համատեղ

հայտարարություններ անել Նախարարների կոմիտեի հանդիպումներին՝ արշավի ամբողջ ընթացքում:

\* \* \*

## **Հավելված 2**

### **Արշավի նյութերը**

Արշավի հետևյալ նյութերի պատրաստումը կախված է ես արշավի կազմակերպման համար տրամադրված կամավոր հատկացումներից կամ ազգային արշավներին անդամ պետությունների հատկացրած միջոցներից:

### **Տպագիր նյութեր**

- Ցուցապաստառներ
- Տեղեկատվական թերթիկներ
- Էջանշաններ
- Փաթեթներ
- Բրոշյուրներ

### **Տեսալսողական նյութեր**

- Հեռուստատեսային և ռադիո գովազդներ
- Հանրային ծառայության հայտարարություններ
- Տեսանյութերի փաթեթներ
- Լուսանկարներ
- Տեսաֆիլմ
- Ինտերնետային անիմացիա
- Ցանցային վիրուսներ

Արշավի նյութերը, որոնք կպատրաստվեն, մատչելի կլինեն արշավին նվիրված ես առանձին ինտերնետային էջին:

## **Հավելված 3**

### **Ժամանակացույց**

#### **2006թ.**

Կանանց նկատմամբ բռնությունների, այդ թվում նաև ներընտանեկան բռնության դեմ պայքարի ես արշավի նախագիծը վերջնական տեսքի է բերվել և ընդունվել աշխատանքային խմբի կողմից ապրիլի 25-27-ը խմբի երկրորդ հանդիպման ժամանակ:

Մադրիդի համաժողովի մեկնարկը 2006թ. նոյեմբերին, հնարավորինս մոտ նոյեմբերի 25-ին՝ Կանանց դեմ բռնությունների վերացման միջազգային օրվան և գենդերային բռնությունների դեմ ակիվության 16 օրերի սկզբին:

Կատեղծվի արշավին նվիրված ես հատուկ ինտերնետային էջ:

Ես անդամ պետությունները կնշանակեն տեղեկատվության պատասխանատուների և ազգային արշավները որքանով հնարավոր է կմեկնարկեն 2006թ.-ին:

#### **2007թ.**

Ես անդամ պետություններում կկազմակերպվեն ռեզիոնալ սեմինարներ:

Ազգային արշավները կշարունակվեն, և կմեկնարկեն նաև այն անդամ պետություններում, որտեղ դեռ չեն սկսվել:

Արշավի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ միջանկյալ հաշվետվությունները կներկայացվեն աշխատանքային խմբի ուշադրությանը:

#### **2008թ.**

- Կկազմակերպվի Արշավի եզրափակող սեմինարը:
- Ազգային եզրափակիչ զեկույցները կներկայացվեն աշխատանքային խմբի ուշադրությանը:
- Կընդունվի աշխատանքային խմբի վերջնական զեկույցը (ներառյալ ԵԽ արշավի գնահատումը):